

պէս իշխանք եւ մեծամեծքն առ թագաւորն մտեալ, որպէս թէ փախուցեալք յայնցանէ, ոմանք խորամանկութեամբ եւ ոմանք հաւաստեալ երկուցեալ մտին անդ: Զայս պատճառելով ծառայիցն թէ Մեք որ ծառայ եմք, և մէկ¹⁾ քանի մարդ ի կերպարանս վէքիլի եղեալ են եւ զմեզ այսպիսի վիրաւորեն հանապազ, զօլօֆէն կարմիր եւ փող ըստակ տալով եւ ինքեանք ուտելով զվաստակն: Եւ ոմանք ասացին թէ կիրիտու ծառայք են եկեալ՝ թէ եւ Զ զըստէ որ զօլօֆէն չտվին. քայց առաջինն հարկաւոր էր, որ զըստակն խիստ աւիրեցին, որ ի մէջ Ռ ըստակին օլօֆիցն ձ ըստակ չէր անցնիր ի մէջ քաղաքիս. զայս առնէին ոմանք ապաւինելով²⁾ ի ներքինիսն թագաւորին: Եւ սոքա գուժարեալ ի մի խորհուրդ եւ վառեցան խստագոյն դիմեալք ի յԱթմէյտանն մօտ ի պալատ թագաւորին թէ Զայն արքն կ'ուզեմք որ թագաւորին խալին են³⁾. և առաքեալ մի և երկու անգամ զօրագլուխ ի թագաւորն թէ Զայսոսիկ սպան եւ ուղարկեա՛ առ մեզ: Եւ երթեալ զօրագլխիցն, ներքինիքն ոչ թողէին մտանել առ թագաւորն, եւ ինքեանք հրաման տալով նոցա թէ Թագաւորն հրաման արար՝ Զեմ տալոց զձեր ուղածն: Եւ զայս լրեալ նոցա՝ դիմեցան ի պալատն և ազաղակէին, որ հասանէր յականջս թագաւորին եւ երկնչէր: Եւ յղեցին առ թագաւորն այլ զօրագլուխ եւ մեծամեծ արս, եւ զնոսա ոչ թողէին ներքինիքն մտանել անդ թէ Մեզ ասա՛յ. և սոքա ունէին ի ձեռս իւրեանց արզուհալ թէ տայցեն առ թագաւորն. և ոչ եղև հնար մտանել կրկին:

Շաբաթ առաւօտուս (23 Փէբր.) կրկին ուխտիւք մինչև ի Դ ժամն ընուն զԱթմէյտանն⁴⁾, ուխտ և դաշինս արարեալ՝ թէ ոչ ցրուեսցին բնաւ: Եւ անտի դի-

1) մեր. 2) յապաւինելով. 3) է. 4) զյէթմէյտանն.